ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ԳՈՒՄԱՐՎԵՑ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԺՈՂՈՎԸ

Նոյեմբերի 2-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ գումարվեց Գերագույն Հոգևոր Խորհրդի ժողով: Ժողովը գումարվեց ընդլայնված կազմով, որին մասնակցում էին Գերագույն Հոգևոր Խորհրդի հոգևորական և աշխարհական անդամներն ինչպես Հայաստանից, այնպես և արտերկրից:

Ժողովը բացվեց Տերունական աղոթքով: Ողջունելով Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներին՝ Հայոց Հայրապետն անդրադարձավ օրակարգում առկա խնդիրներին և հաջողություն մաղթեց առաջիկա աշխատանքներում:

Որպես ատենապետեր՝ նիստերը վարեցին Տ. Վաչե արքեպիսկոպոս Հովսեփյանը և Ավստրալիայի ու Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Աղան արքեպիսկոպոս Պալիոզյանը:

Ժողովին Գերագույն Հոգևոր Խորհուրդը քննության առավ Եկեղեցի-պետություն հարաբերությունների օրենսդրական դաշտի կարգավորման ուղղությամբ տարված աշխատանքների ընթացքը, որի քննարկմանը հրավիրված էր մասնակցելու ԱԺ նախագահ Տիգրան Թորոսյանը:

Քննարկվեցին Մայր Աթոռի սոցիալական ոլորտում իրականացվող ծրագրերի համակարգման, համայնքային-ծխական կանոնադրության նախագծի խմբագրման, ինչպես նաև քրիստոնեական դաստիարակության և ներեկեղեցական կյանքի վերակազմակերպման հետ առնչվող հարցեր:

Ժողովն անդրադարձավ նաև Հայաստանում գործող աղանդավորական կազմակերպությունների մարդորսական գործունեությանը և կարևորեց հայաստանյան թեմերում և հեռավոր շրջաններում մեր ժողովրդի հոգևոր կյանքն անաղարտ պահելու և հոգևոր քարոզչությունն առավել արդյունավետ իրականացնելու անհրաժեշտությունը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀՏՈՒՄ ԿԵՂԱՀԱՄԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ ՂԵՎՈՆԴԵՍՅԱՆԻ ԵՎ ՀԱՅՐԱՊԵՏ ՂԱՐԻԲՅԱՆԻՆ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐ ԵՎ ԿՈՂՄՈՒՄԱՎՈՐ ՈՒՂՂԱՎՈՐՈՒՄ
ՏԳՐԻՆ ԹՈՐՈՍԵԱՆՆԵՐԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՄԻՈՒԹՅԱՆԸ
ԱՌԿԱՅՈՒՄ ՄԻՆՉԵՎ ԱՄՍՈՐԻ ՀԵՏՈ ԵՐԵՔՇԱԲԹԻ ՀԱՅՐԱՊԵՏ
ԳԵՐԱՊԱՏՈՒ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՍՈՒՐԲԻՆ